



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ատեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օպտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1698

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ



ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

Ի ՑՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎ.ԲԵՆՅԱՅ

1872

171

R-38

2004

2004

2010

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ



9057-244

171
F-38
44.

ԲԱՐ Ո Յ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. Է ԶՄԻԱՆՆԻ
Տ. Տ. Գ Ե Ո Ր Գ Ա Յ
Վ Ե Հ Ա Փ Ա Ր Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐքի ՄՐՅՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ
Տ. Ե Ս Ա Յ Ե Ա Յ
ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
Տ. Մ Կ Ր Տ Զ Հ
ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆ ՄՐՅՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄ

1872

Ա. Ա.

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ԵՆՈՐԴԱՍՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՏԻԳՐԱՆ

Յ. ԲԱՍԹՈԼ

ՔԱԶԱՏՈՂՄԻԿ ՊԱՅԱՋԱՏ

ԵՒ

ՆՈՐԱԲՈՂԲՈՁ ՇԱՌԱԽԻԴ

ՄԵՆԻ ՏԱՆՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՈՐ

ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

ՆՈՒԻՐԵ

ՈՒԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ

ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

490
39

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա. ԶԴԵՔԲՈՒ նիւթական ու բարոյական ՀՀ ամսագիրնեան թիւնը վառացը ըստ համբաւը իրենց առէկ գաստիորակութեան թիւն արդիւնքն է . ինչ գաստիորակութեան կը համեմանը որսի . մաքի և մաքմայ բարուր մշակութեանը իր առաջապահումը , բայց մաքդը կը կատարել բարուրի բառ մաքդիսըն պաշտամին համեմանը , միարդը կը բարուր զմանարի առաջանքն իմաստութեամբ և մարդկային օգտակար գիտութեամի . սիրու կը կրթաք գեղցիկ առարինաւթեամբ , կիբերը կը կանոնաւորութիւն , համացըները կը չափաւարին և կ'ազնուածնան , մազմնը աշխատասիրութեամբ , կը զարգանայ + առ.որջ . կրոնի և ամեն աշխատասիրութեանց պիտականութեամբ կը բարուր կ'ըլլայ : Այս կերպով կրթուած ու առաջարարակութան մէ կը կամախնանաւթեան առհնձնիք համեման . մարդկան առաջապահումը , ինը անձնն եղանակութեան և ինը արդին փառքն ու պատճեր կ'ըլլայ . վասնիդ զգացրանքներն ու հոգւոյ բարուր կարգութեամբները զարդացած ու զարգացրուած կ'ըլլայ ամեն անապահ պիտակի ձերքերով , և ինը Արարէն ընդուանած բարուր թեանց առերերը իր ինը վկայ անցուցած և բեզմանակութեամբ կ'ըլլայ . և ահան այս է բան մարդը :

Այն ազգի գաստիորակութեան հոնիր թէնոր այս վայսանանին զպաց հրմանաւ չէ , թէնոր մարդկութեան չէնքը վարուց ու բարուց ու զգացրութեան և պարաւուց ու իրաւանց ծառանօթութեան ու գործադրութեան վկայ բարձրացած չէ , կործանումը անհամարէն է , ամեն տեսակ նիւթեական ճախութեանը , հարաւանթեանը , զորութեանը , արհեաւոր , և առաւետար բարուն աղ ընդուանայն կրյանութեան է թէ անանց հետ մէկանդ չ'ունենացած մարդ . մասին և հոգեկան անդրագաղթի ուռուբանութեանը , որ է մարդուն բան կատարելու թիւնը :

Մեր ազգայն գաստիորակութեան և զամակը գեռ այս սահմանին մէջ մասած չէ , և անց համար է , որ աշխատաւթեանց և ժամանակի երկարութեան համեման արագութեամբ չ'ունեցած առաջապահումը , ցաւոցն այն է , որ այս նախատական երկարագութան գրքերու աղ մէծ կարուութեան ունիքը , գըս-

քե՞ր, որ թէ գալոցներու և թէ ընտանեաց մէջ ընթերցաւ նութեան յարմար ու վշշլուչ ըլլան իրաւ կ որ շատ մէ վիճականնեւ թէ անց թէ արդմանու թէ ինձներ ու Եցանք, բայց մաս շաբի աւ ելի օգտակար ծառապեմնեւն ըրած պիտի ըլլայնն անց աղին թէ արդմանին վերը, եթէ իրենց ոչ քրտանշն աշխատան թէ ինձնը աւ ելի ընտափ և հաստատուն օգուտ մասակարուրոց երիսարարութէ անց նուրիէին, որը շարու նուկ կարգացաւ երաց յարմար ըլլայնն Ա յաղիսի գրքը ուիշ են ու ուժեմն ու ուժենն աւ մենանու եւ մերձնան բարան, գուարմաննեն և կրթեն:

Ներկա բարցախան հրանձնափէ գէղեցիկ պատման թէ անց դրցից չենք երախառացը, որ այս ամեն համարան վեճուր կատարեալ է, ասկան կը յառանք, որ գնեւ իրաւ օգտակար լրնայ ըլլազ, եթէ նախակը թակն գործաց մէջ մանաւ, և գէղեցասաններու մէջ կարգացուելու ընդունելութէ ինձն գտնաց:

Սանց գիրքը որդէն 1809ին Խոսկերենէ գրաբարի Յարդմանու ան և Մարտափառ մէջ տարուած էր, ինչ ոյցէր բարզագիր Աւարից — Հունգարից փախ հիւ պատման Մարտափառ ան Մեծապատ. Պ. Յարգիր — Բարպար բարպար ու ուղարկ և ապաւու ու նորագու ու նորագու եւ լույ, որ պարզ աշխարհի վրաւաւ թարգմանու եւ լույ մերձնու իրաց ընծափ ու ու իրաւ գոմիւ մի առաջնորդ եւ ինձն ուրով և համար ընդանեց Ա մենապատիք: Տ. Եսայի Պարմարից Ա. Հայր:

Արդ՝ ուրբ Ամռայոյ ժամանակարաց վարժարանի աշխատանիքն մէն անհամանըլք արժակութիւն ատեն իրենց մէջ բանձնեցն իրոք քառամբ աշխատացն և թէ արդմանը ցնն, որոց անունները հսկեւեալ ցանեին մէջ կը դնենք:

Կարէ ուր աւաեցնոց իւրաքանչիւր պատման թէ ան վլրջն՝ համաստ խօսական խորհրդածութիւն և յորդորանին ու ելեցնել, զար մէկ տառ բառն պատման թէ ինչն զանելով գլուխնք, բայց մի և լ. գլուխներու նոյն թէ թէ արդմանոց ու շաբաթք զար է իւր Ի. Չ գլուխներու մէջ թէ արդմանոց աւ եցուցնիք զար է իւր Ի. Չ գլուխներու նոյն թէ թէ արդմանոց աւ եցուցնիք նախակարանց վայոյք յօթուած մը, յօթուած է որ օգտակար կը ըստ:

Իսկ գրքին օգտակար թէ ան վայ բար մը անգամ ըստ աւ աւ ըստ կը համարինք, քանի որ գէղեցիկ առաջնոր-

թէ անց յորդոր և գտանուցին մայութեանց պարագ կը տրամադակէ, բանի որ կը նուանի օրինակներով և պատմական սուրբ գէջ ու բերութ կը նուանացնեն մէջ բարու ու ուղարկանին վարժը և շաբին ու մարդին պատմիչը: Աւ բերմն ալ ու բրէ բան չը մասք մէջ ըստ բարու միայն յորդորել որ սիրալ, համար թէ ամբ, համար զանցութէ ամիբ և ոգուտ բարուտ մասք կորդացուի, այնու հետեւ իւր արդիւնը սիրալ ըլլայ իւր ֆառաւոր գոմիւնը, և այս առան սիրալ պատմի աղին բարերարին ազդութու բարձրացուին թարգմանոց աշակերդը: և պիտի քաջալըրուն թարգմանոց աշակերդը:

- Գ. Ա. Ա. Վ Ապաւ թիւնեան իսացելոիք: Ա. Ի. Դ. Ի. Զ. Լ. Գ. :
Պ Պարու Յակոբեան Չանագ—Գալեցի: Լ. Ժ. Ժ. Ա. Ի. Բ. :
Թ Թագիւր Գ. Ի. Ի Որդի որդէն Արքիանու պօլսցիք: Գ. Ա. Ե. Ի. :
Կ Կարպէկ Թավմանէն Չանագ—Գալեցի: Զ. Թ. Ժ. Ա. :
Գ Գերոյ Արգութէն Արքապէկից: Հ. Ա. Ի. Ա. :
Գ Գարցիւլ Պազարին Եղիսաբետցիք: Ժ. Բ. Լ. Ա. Ա. :
Ա Աւելի Կ Կարպէկ ան Կ. Պարէցիք: Ժ. Ժ. Ժ. :
Կ Կարպէկ Ս Յակումինեան թարկացիք: Ի. Բ. :
Կ Կարպէկ Մ կրաչան Եւ գոկացիք: Ի. Բ. :
Յ Յարութիւն Սահամի ան Վ անեցիք: Ժ. է. :
Ս Սիսակ Ավելին Ան Սերբաստացիք: Ժ. Բ. Լ. Ա. :
Ս Սարգիս Ստեփանեան Շ. պատացիք: Ի. է. :
Յ Յարգիս Ստեփանեան թարկացիք: Ժ. Պ. :
Յ Յարգիս Ստեփանեան Մարտիրոսցիք: Ժ. Պ. :
Յ Յարգիս Ստեփանեան Վերաստացիք: Ժ. Պ. :
Ս Սարգիս Ստեփանեան Շ. պատացիք: Ի. է. :
Յ Յարգիս Ստեփանեան Վարդանցիք: Ժ. Պ. :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ

Ա.

Հիւանդական

ԲԱՐԵՐԱՊՈՒԹԻՒՆԸ քաղցր է ամեն ժամանակ, բայց աւելի քաղցր կ'ըլլայ թէ որ չյուղացուած ժամանակ գործուի:

Լոր աղնուական մը առաւօս մը կանուխ անձանօթ կ'երպարանքով առանձին Ա ենա քաղցրին վաղացներուն մեկն կ'անցնէր, առարներկու տարեկան տղայ մը տեսաւ, որ իրեն կը մօտենար, և խնապհ ու արտասուալից գեկով, ցած և հեծեծանաց ձայնով ողօրմութիւն կը խնդրէր: Ո անկան դիմաց պայծառութիւնը, համեստ շարժմունքը և պատկանքը՝ որ մանկան դիմաց ամենագեղեցիկ զարդն էր, աչքէն վաղզ արցունքները և հեծեծակիւն ընդմիջւալ ձայնը, մեծ ներդործութիւն ըլլին այս աղնուականին սրան, որն որ պատասխանեց անոր տաելով. “Ք արտաքին կազմութեանդ և ձեւերուդ նայելով չեմ կարծէր որ աղքատ ծնած ըլլաս ըսէ ինձ ուրեմն,

Ե՞նչ պատճառաւ կը ստիպուիք մաւրալու ու ԱՌշաբիս, ասաց մանուկը՝ հառաջերով և արցունքներ թափելով, ես այս խղճակի վեճակին մէջ չեմ ծնած, սակայն հօրս ապարագդ դութիւնը և մօրս ներիսց վիճակը, զիս կը ըստիպեն զայս ընելուոյ ։ Այս է քո հայրդու ։ Այս համբաւ վաճառական մէր, և իւր բարեբազութիւնը ապահովելու կը ջանար, բայց իւր հաշուաթցին աղքատանալը, զիկն եւս մէկ վայրկենի մէջ վար զարկաւ։ և մէր աւելի թշուառաւթիւնը այս եղաւ, որ նա իւր սրսի ցաւոց չխարենարավ համերեցը մէկ ամփան յետայ առ ։ Մասուած փախեցաւ ։ Ես, իմ փաքք եղացար և մէր մայրք յետին թշուառ ութեան մէջ մնացինք ։ Ես ինձ համար ապահովերւ տեղ գոտայ հօրս բարեկամներէն մէկուն քով, մայր ալ իմացէս որ բայց, իւր ձեռադոքութիւններով կարողացաւ մինչեւ ցայսօր պահպաննել իւր անձը և փաքք եղացար, բայց այս գիշեր յանկարծ ասասիկ ցաւ մը բռնեց զննքն, որ կասկածել կուտայ ինձ անոր ապրելուն վայս ։ Կարօտ եմ և զուրկ ամեն բանէ, և չդիսեմ անոր օգնելու կերպը։ Օ խանացաներուն քով չեմ համարձակիր մօնենու մուրալու համար ։ բայց ով աէր, քո ինձ օսարական երեւեղք քաջալերեց զիս այսօր յաղթահարել ամօթխածութեան և մօնենալ քեզ։ Օ՞ն ուրեմն, գթա իմ թշուառ

մօրս վրայ, և չնորհք ըրէ ինձ անոր օդնելու միջոց մը ցույնելու։

Այս ըսկըով սկսաւ ըստ մանուկը, և ազնուականին սիրառ շարժեցաւ, ուստի հարցուց, «Հաս հեռուն է ասկից մայրդու ։ Այս փողոցին ծայրը, պատասխանեց մանուկը, ձախակաղմեան վերջն տան երրարդդ դասիկնեն մէջն ։ Այս իշխութեամծ է զիմքը ։ Այս անոր համար կ'երթացի բայց չդիսեմ ինչո՞ւ վարձարեց բժիշկը, և անոր պատուիրած դեղերը ինչո՞ւ գնեմն ։ Ազնուականը հանելով իւր քսակին երկու երեք ոսկի և տաղը մանեկան ասաց ։ Այս իշխութեամծ շատափէ շուտով բժիշկ մը գտնալ և մօրդ օգնութեան հասպիրու ։ Վանուկը շատ մը գոհութեան խօսքերավ շնորհ հակալ եղաւ, և վայելով հեռացաւ անկից ։

Երբ մանուկը անհետացաւ, անծանօթ աղնուականը միարը գրաւ ինքն անձամբ հիւանդին ացցելութեան երմալը ։ Վանդուրներէն վեր ելալով փոքրիկ սենեակ մը մօսաւ, ուր ուրիշ բան չսեռաւ, բայց միայն հին և անարդ քանի մը կարսամներ, խարխուլ սեղան մը, հին արդի մի, անկարին մը ուր կը նրան չըր հիւանդը, և ուրիշ փոքր սենկողին մը անոր քով։ Տիպութեան խորը կը սասաներ կինը, և իւր փաքք մանկիլ մահճին ծայրը լայն շնորհ չասպառ կը լինէր ։ Կ'աշխատէր մայրը զայն քաջալերելու, բայց նոյն խկ նիքը կարօտ էր

բաջակերութեան : Ազնուականը խղճալով
մօտեցաւ անօր, և զայն քաջակերեցվ սկսաւ
բժշկի պէս հարցումներ ընել հիւանդակութեա-
նոր վկայ : Ամեն կարճ կերպով անոր պատմե-
լին զինի, համաշերով և արցունքներ թափե-
րով ասաց . Ավագ տէք, իմ ցաւս ուրիշ աւե-
լի մեծ և աղետավի պատճառէ կը ծնի, և բը-
միշներու ձարտապութիւնները չեն կարող
զայն բժշկել : Ո՞սք եմ ես ամենամշտառ
որդւոց, ապերջանմիկ մայր, իմ եւ որդւոց
ապէտքը սիրոս խիստ ցաւցուցած են : Ո՞ի
միայն մահը կրնաց զիս ազսանել ցաւերէս .
բացց նոյն մահն խի կը սարսափեցնէ զիս, երբ
կը յիշեմ որ սախառւած եմ այն ատեն թռ-
դութշուտառ որդիներա միայնութեան մէջուն
Այս բաժանունն սկսաւ աչքերէն որուն որուն
համիլ արտասոսւոց մարդարսափայլ կաթիւ-
ներ . յետոյ պատմեց բալը գէպէերն ու անց-
քերը, զօրս ծպտեալ բժիշկը չդիմացողի մը պէս
մէկի մէկի լաեց, և ինքն եւս անոր հետ սկը-
սաւ արցունք թափել : Վերջապէս ըստ
անոր ազնուականը . ԱՄի կործը յցադ բոր-
բովին այս բաներու համար, Տէրո ողբանած է,
չմունար զեքու . Քա ազետիցդ ես ալ ցաւա-
կից եմ, բացց Տէրով ողբանութիւնը մեծ է,
բարբարին մի լքանիք : Վղէկ խորհէ ներկայ
կետանդ պահանձնելու, որ խիստ կարեւոր է
զաւակացդ համար : Խառոր մի թուղթ ունիս

գեղերը վկան գրելու համար ։ Ավագ թուղթ
մի սպատակեց եօմը տարեկան մանկան կար-
գալու վարժութիւն ըրած տեարակիւն, որ
մահանին ծայրը գրուած էր : Ազնուականը այս
թուղթը գրելն վերը ըստաւ . Այս գեղը
կը գորացնէ գրեղ այժմ, և յետոյ երբ հարկը
պահանջէ աւելի լաւը կը պատրաստեմք, և
կը յուսամ որ սակաւ ժամանակին առողջա-
նաս ։ և առմանակը սեղանին վկայ թողելով՝
գնաց :

Քանի մը վայրկենէն վերծը մեծ որդին վե-
րադարձաւ . Այիրելի մացքը՝ ըստ նա, քա-
ջակերուիր, Տիրով ողբանութիւնը մեզ հետ
է . անո, ինչ որ այս առատու աղնուական մը
առատապէս տուաւ ինձ, կը բաւէ մեզ ա-
սիկայ քանի մ'օք : Իշկին քալ ալ գնացի,
որ հմայ կուգայ . թուլացներ բոց ցաւերոց և
միսիթարուիր ։ ԱՎլորդեակի՝ ասաց մայրը,
Եղի գիրիս . քա անմեղութեանդ համար Տէրը
ողբանեցաւ մեզ, որուն համար կը խնդրեմ
Աստուծմէ, որ իւր հովանուոյն տակ պաշտ-
ուանէ զեքուերիար ժամանակ : Անձանօմք բը-
միշի մը հիմա գնաց ասկից . սեղանին վկայ
եղած տամանակը անեն, և գնա՞ բեր ինչ որ սրա-
տուիած է անոր մէջ ։

Անեուկը թուղթը ձեռքը առաւ, և զայն
կարգալով պաշեցաւ . նորին դիմէց գարձեալ
կորդաց, և վերը պազակեց ասելով . ԱՎլ

մայրիկս , արդեօք այս լինէ ո՞ : || Կայրը զարհութան և ապշած թուղթը խլց նորս ձեռքէն , և մեծ տագնապով կարդարավը դանց . ո . . . ո՞ . . . կայրը . . . այս բառն ամեն թուղթը ձեռքէն ընկաւ և ինքը մարտցաւ :

Այն տամակը օգտատապառ Յավանիք Բ . կայսեր համանն էր , որուն մէջ առանձին իւր դանձէն առատ թոշակ կարդած էր անոր : Ազգէկ ժամանակի մէջ հասու բժիշկը զայն ու շաղնացութենէն արթնցնելու համար , որուն մէջ յանկարծական զիազուածով ընկած էր : Իշխն տուած գեղերով սակաւ ժամանակին մէջ առողջացաւ այն հիւանդութենէն , որ հոգւց նեղութենէն յառաջ Եկած էր : Այսպէս առատասիրա և օրհնեալ նիքնակաց ուրախացաւ այրիին առողջութեան պատճառ լինելուն , և բազդի զիազուածներէն սաստիկ կերպով հալածուող և նեղեալ տունը՝ երջան կայնելուն համար :

Բ.

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԻԿԱՅԵԼ

Հայություն || Եղիսլու Դուբին քաղաքի հարստաս վաճառականի մը զաւակ էր . իւր անձին գեղեցիկութեան և իւր հոգւց զաւար թութեանը հետ կապուած ուներ նաև քաղցրակառութիւն և դժութիւն , որով

խիստ գոյնէլի կը հանդիսացնէր իւր վայ գտնուած բնութեան ուրիշ ձիթելն ալ Այս աղնուական անձը վաճառականութեան առ թիւ թթուածուի մէջ գտնոնելով , օր մը դիմացէն նաւու մը հասնիլը տեսաւ , որուն մէջ երկու օրիորդներ դառնապէս և աղէկը սուր կերպով իւրլավն և կողմայն : || Կարդասիկական գժութեամբ սիրտը շարժեցու , և գդրիմնօք մօնեցաւ անոնց իրենց լալուն պատճառը հարցոնելու համար , և իմացաւ որ նոր գերի բունուած և բերուած էին ծախուելու համար : Կարեկցութեան ընսկան կիրքէն չորդուած նոյն ժաման մօնեցաւ զանոնք գնելու , և միանդամայն ապահ առադակ ներու իրմէ ինպար ծանր գումարը վճարելով և բաղզը խօսքերով զանոնք քաջալերելով իր նաւուն մէջ առաւ . նաեւ յայտնեց անոնց թէ բոլորովին ազատ են , և միանդամայն իրենց աեզզ գտանալու համար պէտք եղածը յօմարութեամբ պիտի հոգար : Այսիսի անակնիկալ առատասրութեան վայ հայցմամբ ուրախանապով երկու օրիորդներն ալ նոր ըստ ոսքը ինկան , և ցաւակի սղեւերուն ձայնը ցնծութեան փիսուելով ուրախութեամբ իւրենց շորհակարութիւնը մատուցին , ոչ հայրենաց խօսքն ըրին , և ոչ ալուրիշ կարօսութիւն մը յայտնեցին :

Այս երկու օրիորդներէն մէկը իւր անձին

փառաւոր աղնուականութեան հետ անհամեմատելի գեղեցիութիւն մ' ունէր : Հոգի գարդոս սիրահարեցաւ անոր, և տեսնելով անոր վայ բարերարեց օգտին համար զաւմերապներն համոցելու յարմար համեստ համութիւն ու յօժարութիւն, նորա երախտագիտութեան նշանները, նա մանաւանդ ամենէն մեծ ձիքքերը զար նիստեց նորա վայ, դուարթութիւնը, փափիութիւնը, մրութիւնը, հեղութիւնը, շարժմանց վեհութիւնը և վերջապէս պարիեշ աղիներ և իու հական սննդեան յայտնի նշանները. Երբ այս ամենը փորձով տեսաւ, երթալով սակաւ տռակաւ. իւր սրտին մէջ եռաբարոք սէր մը արձարծեցաւ: Խոկ կրտսանդայն, որ արդէն երախտապարտութեան աւելիքացը կապովեաստած եր Հոգարդոսի հետ, բայց օր ըստ օրէ նորա վայ աւելի ինսահածութիւն և եռանդուն աշխատութիւն տեսնելով նա մասւանդ անձնն գեղեցիութեան հետ աղնուական մարդու լաւագոյն ձիքքերը գտնելով՝ Հոգիարդոսի սիրոյն հաւասար սէր ցցուց:

Հոգիարդոս շատ անգամ աղուելով և տօնիքերով կը հարցնէր նորա անունը, ցեղը և հայրենի երկիրը բայց անիկար բաւական համարեց յայտնել միմիստին իւր անունը որ կրտսանդա կը կրչուէր և իւր ընկերն ալ լիզապէլ լու, և ուրիշ մնա և իցէ պարագայներու համար:

մար խնդրեց որ հետաքրքրիր քըլարով լուսութեան տակ թողուց պատական համարէ գեղ գիտնալ, կըսէր, որ բու մնա ըրած խնամքներուուդ անարժան չեմ ծնած, որոնք օր մը պիտի վարձատրուին :

Հոգիարդոս Դութվինքալպքը հասնելով իւր հօրը առաջը ներկրսացուց այս երկու օրիորդները, և միանդամայն պատճեց՝ թէ բ'նշ պէս ստացաւ զանոնք, նաեւ յայտնեց կրտսանդայի վայ ունեցած իւր չափազանց սէրը: Հոյրը գովեց իւր որդւոյն առաջասարը տութիւնը զանոնք գերութենէ աղատելուն համար. բայց առաջին անգամ մէկէն ՚ի մէկ ըլ համեցյաւ այն ամսւանութեան, որուն կը ցանեար Հոգիարդոս այն օտարական և անծանօթ օրիորդին հետ: Այսիս շատ ըլ տեւեց՝ հոյրն ալ յազմուեցաւ կրտսանդայի վեմ շարժուածքներէն և տենչալով յատկութիւններէն, ուստի և գէմ ըլ դրաւ իւր որդւոյն ըրած յանձնախակի թախմանձանաց: Հոգի գարդոս թէպէտ յառաջնուց իւր սէրը այլ և այլ նշաններով յայտնած եր օրիորդին, բայց չըր համսրձական ամսւանալու խորհուրդը երեւան հանել:

Երբ Հոգիարդոս իւր սէրը կրտսանդա յին յայտնեց և միանդամայն նորա հետ իր ամսւանալու բազմանքը, այս բանիս վայ կրտսանդա շատ ժամանակ մտածեց և իւր

սէրն ալ Հովհարդոփ սէրէն պակաս ըլ գըստ-
նելով, վերջապէս այն սէրէն յաղթուած հարս-
նացաւ նորա հետ։ և ճիշտ ժամանակին ի-
բնաց երթանիկ ամուսնութեան առաջին պը-
տուղ արու զաւակ մի ունեցան կարուա և
իխատ գեղեցիկ։

Ասկէց վերջը երկու տարի եւս սիրով և
խաղաղութեամբ միտոնին անցընելով, Հովհարդուած թէնէն
գարդոս իւր գործերուն հարժաւորութէնէն
ստիպուած յանձն առաւ նոր և աւելի եր-
կար ծովային ճանապարհորդութիւն մի ընելք
իւր կասամեղա սիրելի ամուսնոց քովին հե-
ռանալու ժամանակը շատ արցուկոներ թա-
փեց, և չափազնց սիրոցն համար նորա պատ-
կերը իւր մասամինն վկայ նկարել առւաւ;
միշտ իւր աչքին առնելու ունենալու հա-
մար։ Ըստ երկիրներ պարսելի զինի վերջա-
պէս եկաւ հասաւ Պատիրմօ քաջաքը։ ուր
որ մը երբ իւր աչքը տնկած սիրելոյն կի՞ն
գանհագրին վկայ կր նայէր, ուրիմէ չըր կրար
իւր աչքը հեռացնել, պատահեցաւ՝ որ պա-
րստականներէն մէկը նորս մօտը կրայնած վե-
նելով, այն կենդանագրիր ճանցաւ և անմի-
ջապէս այս բանը թագաւորին հաղորդէց։
թագաւորն խայցն ուրիշ պատճառավոր մը Հո-
վհարդուար կանչելով, ուրիշ անօր հետ զա-
նալուն իրաց վկայ խօսերու ժամանակը զիւ-
շութեամբ կր նկատեր Հովհարդոփ ձեռքը

դտնուած մատանին ։ Թագաւորը երբ տե-
սաւ այս կենդանագրիր վրդութեցաւ և այլու-
թեցաւ, բայց ներկրէն գալով շփոթութիւնը
մէկրի թողուց և մեղմաբար հարցուց Հովհ-
արդուամբ, «Որտն է այդ պատկերը»։ Հով-
հարդուամբ սրտասիսնեց, թէ՛ ախմ ամուսնոց
կենդանագրին է ո։ թագաւորը զարմանարով
մը նորէն հարցուց, «քու ամուսնոյդ ։ մւր է
քու ամուսնոդ ։ Պատասխաննեց Հովհար-
դոս, թէ՛ Կուռքին քաղաքին մէջ հօրս քովին
է ո։ այսուրին քաղաքին մէջ հօրս քովին
է ո։ այսուրին է անսանը»։ այս կասամեղա ան ։ ա-
յսուրինին մէջո՞ն է թէ օսարական։ այսէր
իմ, օսար է նա, բայց չեմ գիտեր թէ որ եր-
կրէն է ո։ զոս սիսեց Հովհարդուա պատմել
թէ ինչպէս ազատեց զայն աւագակաց ձեռ-
քէն, և ինչպէս Կուռքին բերաւ և ամնաւո-
նացաւ նորա հետ։

Թագաւորը այս ամէնը դդուշութեամբ
լսերէն զինի, առանց անոր ուրիշ բան մ' բա-
րու, հրամայեց զայն պահել։ Ծեաց հրամայեց
թագաւորը ամբողջ նաւ մը պատրաստել բո-
լոր պէտք եղած բաններով, և զինեց ՚ի Կուռքին
որպէս զի կասամեղան իւր զաւակով և կ-
ազապէլլան ալ միասեղ անմիջապէս Պատերմօ
քաղաքը բերեն։ Արդարեւ ովկ կարող է այս
տեղ բնականապէս ներագրել թշուառ ու
ողբանի Հովհարդուամբ պատմն ահ ու գործ և
տարակուսութեան անհնարին տագնապը, երբ

կը տեսնէք նա այնպիսի վուանգ մը, որուն մէջ ինկած էր նիքը իւր գործքերը անխոհէմ կեր պիտ պատուելուն համար: Ո՞վ կիրայ խօսրով ձառեւ ապերջանիկի լրտանդպայի երկիւղն ու զարմանքը, երբ պապիսի անանիկալ գիտուաւ ծովիւր հօրը հրամանաւ նիքը կալ և կապ կը մնէր: Կամ թէ ովլ կարող է լիովին կոճել և ողբալ այն թշուառ ու ողբալ մէջ ծերունեցն միանակութիւնը, որով նիքը անկարծակի կը զոյտուեր իւր հարսէն, թռանէն և զաւկէն:

Լրտանդպան Պալէրմոց հասնելով, թագաւորին առաջն առաջն կը ներկրացանայ. երբ առաջն անդամ զիտագաւորը կը տեսնայ աշէն ու դռ զէն սարասիած քիւ էր մնացած որ նուալէալ գետին պիտի լինար, սակայն քաջալերուերով և հօրը ուղբը ինասալ կ'ըսէ. ո՞վ աէր, հարի է որ շատ պատճառներով ես Զեր աչքին յանցաւոր երեւիմ, և ամենայն հնազանդութեամբ Զեր բարիւթեամբ լի հրամանին կըսպասեմ. բայց և այնաէս այս մասսալ մասնուկը և նորա վատարազգ հայրը անմեղեն, և ես անտեց կինաց աղօստութեան համար մի այն կ'աղաշեմ: Տակաւին զիս եւս կարծուածէն պատիսա յանցաւոր պիտի գտնաս և անմեղ պիտի գտնես, թէոք բու բարիւթենէդ ինսա և առվրական գթութենոր ունենաս: Են սարասիել օրը, որ ատեն որ ես յափրշտակուելով հեռացայ քեզմէն, այն օրը ես լ-

դապէլըային հետ միասին կը շրջէմք ծովու և գերբն եղող աբբայական բուրաստաններուն անդիի կողմը. այն ժամանակ այն տեղերը պահուուլ խումբ մը մարդիկ յանկարծ մեր վիայ համելով յափշտակեցին զմեզ. Ո՞ւնք մեր պատիսի քարհուրելի վիճակի մը մէջ գըտնուենիս տեսնելով, սուացմիք կանչեցինք և բողոքեցինք, սակայն 'ի գուր: Որովհետեւ Դերից Դուքսը, որն որ նոյն խակ նիքն էր սյո նենգութեան պատճառը, զմեզ իւր հաւառուն մէջ բերել տուաւ որ մեզմէ շատ հեռուուն չէր, և բողոք առագաստները բացուած ու պատրաստած էր, և անմիջապէս ձամբայ եւ բաւ: Զեր սույց առջեւը խոնարհէլով կը խաստովնիմ, ով Տէր, որ յառաջուց ք կըսայ ես բողորով պատիւ հեռանալ Դերից Դուքսին սէրէն. բայց երբէք ք հաւանեցայ ես այնպիսի մէկ փախտեան, և այն ժամէն սիրուեալ ես զայն աշխարհիս ամենէն ատելի մարդը և ամենաչափն համարեցի: Երբ բաւականին հեռացած էինք, յանկարծակի աւազակաց նաւ մը յարձակեցաւ մեր վիայ. պատերազմը երկար և սաստիկ եղաւ. Դուքսը կատաղաբար պատերազմեցաւ, սակայն վերջապէս շարաւար մեռաւ. 'ի պատիւ իւր բասած այնքան վնասներուն, և զմեզ գերի առին և տարին թունուսի երկիրը ծախեւը համար չո՞ն երի ասսարդ մը գտնուեցաւ, որ կարծես թէ եր-

կընքէն խրիուած էր զմեղ վրմէլու համար։
 Ալսիկս իւր բարեսիրտ գթութեամբն ու
 աղօրմանթեամբն խջճաղով մեր վրայ՝ մեծ զին
 մը տուաւ և զմեղ աղասոեց . և ոչ միայն այս
 չափ, այլ և ասոնցմէ զատ շատ խնամք ալ
 ցրցուց մեղի։ Ըստ անդամ հարցուց նաև
 մեղ մեր հայրենեաց վրայօք, զմեղ մեր հայր
 բնիքը վերադարձնել խստանարզ։ Ասկայն
 ես վախնալի այն կասմածներէն, որոյ մէջ դու
 իրաւամք պիտի իշնայի՞ կարծէլով թէ ես կու
 մակից եմ այս վախատեան, և վախնալի մի-
 անդամայն քու բարկութենէն, երբէք չը վա-
 տահայց վիս անոր յայնմէլ։ Ենուց ամեն
 խնամք ու մարդասիրութիւն ցուցնելով վիս
 իւր հօր քով բերաւ։ Երկար ժամանակ ինձ
 եղած երախտիքներէն զինի թէ և օտարական
 կամ անծանօթ էի անոր և վիս պահերու խոր-
 հրդիքա վրայ յամառած էի, բայց այսու ամե-
 նայնիւ ուրախ սրտիւ ուղեց վիս պահել ու
 խնամել։ Վ շապանցի և բարիացոցի զմեղ
 ով Տէր, գուցե այլ եւու քու գուսարդ կո-
 չուելու ալ արժանի ջըլամ, սակայն այս ա-
 մենք մէկոի գներով ինչպէս որ կը մոռածէի,
 քու բարկութենէդ վախնալի և զՂեղ այլ
 եւս անսնելու յան ալ կորելով և անոր ինձ
 ըրած երախտիքներէն ու միանդամայն չորի
 գարդուի գովելի կենցաղաղաղութեամբը սրու-
 ափս մէջ բորբոքուած սէրէն յաղթուելով ու-

զեցի նորա հետ ամուսնանուլ։ Պատմէ վիս
 հիմա, ով Տէր, պատուհանէ քու որուսարդ,
 եթէ իրաւագը քու բարկութեանդ արժա-
 նացած է, և այս բանիս համար չը տիտի արյու-
 աղնջամ, սակայն իմ առաստասիրու և մարդա-
 սէր բարերարս, որուն են սպարտաւոր եմ իմ
 աղասութիւնն և կեանիս, և այս մաստազ
 ու անմեղ մանուկը աղասուէ այն պատմէն,
 որուն պատճառ բարբալին ես եմ։

Թագաւորք բարկով այս բաները, և իւր դրա-
 ակը արցունիքները և նորա խղճալի կերպարանիքը
 տեսնելով այն ինչ բառաջազն բարկութեան
 ահեղ կիրքով վառուած բարբարան էր, սկսու-
 կամց կամաց իւր սիրու ճմիլ և քաղցրա-
 նալ։ Կատանգայի յետին աստիճան խոնար-
 հութիւնը և գետնամած տարածիլը, նորա
 հեկելումն ու արցունիքները, և նորաբոյ մանւ-
 կան ձին ու աղաղակը, աւելի կը զօդացըները
 իւր մօրը հեծենանքը, խիստ մեծ աղդեցու-
 թիւն ըրբն թագաւորին սրտին։ Վ նմիշապէս
 նա իւր ձեռքը աղջկանը երկնցուց, որ տա-
 կաւին ծունիի վրայ եկած իւր սուխց առնեւ-
 խնարհած կը մնար, զայն գետնեն վերցնելով
 կ'ընէ անոր, Վ շապանցիր վիս այդպիսի ան-
 հաւասար ամուսնութիւն մը ընելուդ համար,
 և աւելի քու վախուսադ քեզմէ ջըլաղէն եա-
 քը իմ գթութեանն վրայօք կասկածելով սիր-
 ալս ցաւցուցիր։ Եայց որովհետեւ կը տես-

նամը որ քու զիս գայրացնելուդ պատճառը
նենդութիւն չէ, այլ առաւել տիպութիւնդ
է, գիտացիր որ ես քու հայրդ եմ և կը ներեմ
քեզի՞ ո. այս բաել գործավոր սիրով գրիեց
զանիկա, և հրամայեց որ Հարիւտարքը առ-
ջեւը բերեն և կաստանդայի աչքերէն սիրոյ,
ցնծութեան և շնորհակալութեան արցուեր-
ներն աղքիւրի պէս հուսեցն, այն ասաիման
որ թագաւորին սիրով փղձկէրով սիրաւ իւր
աղքանը հետ միասին լու:

Խակ Հարիւտարքոս, որ իրեն ինչ ըլլամբը
ը գիտնալով և իւր գործոց երեսի վոյ մնա-
լուն համար երկար ժամանակ վարանման և
մնասանջութեան մէջ մնացեր էր, այսպիսի
նոր հրամանէն մը վկասելով և շուտելով, կեր-
պարանափոխ եղած գործալով կուգար: Երբ
զիրատանդան տեսաւ, անմիջապէս թմբելով
փայտ կարեցաւ. սակայն նորա սիրովը վա-
ռուած, առանց իւր շուրջը գանուղոներէն
ակնածելու և ամէն բան մոռնալով՝ անմիջա-
պէս գրիեց զիրատանդան և իւր օրդին գրկաւ
ցը մէջ սեղմելով, երկար ժամանակ այսպէս
գրիկատանեալ մնացին առանց բան մը խօ-
սերու: Ծեսոց աննայմէ բաժնուելով թագաւ-
որին ուսըր ննիւաւ բաելով. Ալ ընդունիմ, ով
տէր սիրով և յօժարութեամբ կ'ընդունիմքու
վճռուդ ինչ որ ալ ըլլայ, որովհետեւ կատա-
րեցաւ իմ փափակոս, որ կ'ուղէի միանդամ-

իւրայս երկու սիրելիներուս տեսութեանը ար-
ժանի ըլլալ. այս էր իմ փափակոս և նապատակու-
ուրիշ բանի մը չ'եմ ցանկար: Ո՛վիմայն իմ ա-
զաննքո այս է որ ասոնք և իմ հայրս . . . ու:
թագաւորը նորա խօսքերը ընդմիջելով կըսէ.
“Ո՛վ, սիրելի! որդեակ, ո՛չ, մի վլտանար և մի
տագնապիր: Աղջկան և քու պատմաներէդ
իմացայ ես քու անմեղութիւնդ ես քու մար-
դասիրութեանդ վրայ խիստ զարմացած եմ,
Ասուուած քեզ վարձատրել ուղեց, և ես անոր
խորին խորհուրդներուն երկագագութիւն
կուտամ: Ասուուած ձեր երկուքն ալ երջա-
նիկ պահէ, և ձեր որդիքն ալ խմծերութեանս
կազդուրիչ և յենարան պիտի ըլլանու: Հսու ա-
ռաւել եւս նորոգեցան արցունքները, գրիա-
խանաւթիւնք և միրմրմունք: Այս օրէն
թագաւորը նաւ մը նրիեց ՚ի ՚ուրբին Հակ
գարդասի հայրը յարքանիս հրաւերելով, որ
նա ալ ուրսիսիրութեամբ իւր պարագաներովը
միատեղ շուտամով Պալերմոց հասաւ: Աքա ա-
մէնքն ալ Ասուումէ օրհնուած շատ վայե-
լուշ և զուարթ օրեր անցուցին, որով աւելի
բարերարութիւններ ընելու քաջալերեցաւ
Հարիւտարքոս, որով ննիք բարձրացած և սյա-
պիսի մեծ պատուց հասած էր:

Դշմարիա մեծութիւնն ու իրական պա-
սիւր անկեղծ առարինութեան կը վայրէ. շա-

հու պատճառաւ և վախարինութիւնն ընւ
դունելու նպատակաւ եղած որ և ից գործ
առաջինութիւնն չէ : Երանի՞ այն մարդուն , որ
իւր կիւնաց օրերը ճշմարիտ առաջինութեանց
շաբթ մի է :

Գ.

Պատկերը

ՀԱՅՈՎՐԱՅԻ կառավարութիւնը գերամե-
ծար Խնչա Աղջուկիս գատաւորին իշխա-
նութեան տակ եղած ժամանակ՝ Վիկոլումնի
անունով համեստաքարոյ պատուաւոր մարդ
մը կար : Ասիս իւր հասակին ծերութեան
և անձնն ակրութեան պատճառաւ չը կրո-
նար իւր արհեստը բանի , որով մինչեւ այն
ժամանակ կը սնուցանէր թէ իւր անձր , և թէ
իւր պառաւեւալ ամուսինն : Աւստի ստիպ-
ւած էր իւր տան մէջ մնացած կահ կարասի-
ները ծախմէ և ասպիդ : Այս կարասիներուն
մէջ իւր նախնիքներէն յիշատակ մնացած նիշա-
րուած փոքրիկ պատկեր մի կրգանուէր . այս
պատկերը հռչակաւոր Աւրբինեցի Ուափայե-
լին ընտիր ու հազուազիւտ ձեռագործն էր .
բայց ինեղը ծերը անտ արժէրը չը ճանձնար ,
մանաւանդ փաշուտուած և անմարտուր ըլլուրուն
պատճառաւ ոչինչ բանի մը տեղ գրած էր .
Ապա յայտնելով պատկերահանի գործ ըլլուր , յոր
գորեց զայն որ գատաւորին բողոքէ , և բա-

համար ծախեց պատկերահանի մը , որ աւելի
վարպետ էր ուրիշներուն գրած պատկերները
գնելու և ծախմելու մէջ , քանի թէ ինքը իւր
ձեռքով նկարագրելու մէջ : Այս պատկերա-
հանը երբ աեսաւ պատկերը , իսկցն զմայցաւ
նորա գեղեցիութեանը վայ . Ճանցաւ նորա
մէծ արժէրը , վասնվլ իսիստ բնական կերպով
քաշուած էր . բայց աւզերով խաբել արհես-
տին անհմուտ ազգասիկ ու կարօտ ծերը սկը-
սաւ անարդ բանի մը պէս նայն պատկերը վար
զարնել և արհամարհէլ . յետոյ քիչ մը դրամ
տալով՝ այնպէս ցցուց , որ իրը թէ աւելի
ողբութիւն՝ բան թէ պատկերն արժողու-
թիւն կուտայ , և մորով ծերոյն ամամարու-
թիւնը ծաղկելով առաւ պատկերը , և ուրա-
խութեամբ հեռացաւ այն տեղին : Վանի մը
օրէն զինի ծերոյն նախնի բարեկամներէն մէկը
իւր տունը եկաւ , և պատկերը իւր տեղը ըլ-
տեսներով , զրտ շատ անգամ տեսած էր . հար-
ցուց անոր ըսերավ , այն լուսին : Վանի մը
Պատասխան տոււած ծերը . Պատասխան էմ այս
անտամի պատկերահանի մը այսչափ գնովոյ-
շաւասարիմ բարեկամը երբ իմացաւ , որ
պարզամտն ծերը խաբուած և զիկուած է նոյն
պատկերը գնովոյն , բարկացաւ և արտահցաւ :
Ապա յայտնելով պատկերին բազմագին և քա-
ջարուեսա պատկերահանի գործ ըլլուր , յոր
գորեց զայն որ գատաւորին բողոքէ , և բա-

Համար նիքն եւս ուղեց նորա հետ
դատաւորին քավլ երթալ:

Օ գենամիտ դատաւորը ամեն բան մասից
ընելին զինի պատկերին չափը ուղեց, և իմա-
նալով՝ զանոնք արձակեց: Ի արեւախատարար
դատաւորին մշրանշայրին մէջ երիու պատկեր
կար, որք նոյն պատկերին մեծութեամբ շին-
ւած էին: Դատաւորը հրամաց որ անոնցմ-
մին իր շրջանակէն հանեն, և ապա կանչըլով
այն նենակամիտ պատկերահանը ըստաւ անոր:
Այս շրջանակին մէջ դնելու համար պատկեր
մը կրնաք դաշնալ, որսիք զի միւս պատկերին
զոյ դըպաց Այս, ունիմը ըստաւ նկարից, գեղե-
ցիկ պատկեր մը ունիմ, որ մեծաւահամբաւ: և գե-
րազանց Արքինեցի Աստվածային ձեռագործն-
է, և կարծես թէ յատիսպէս այս շրջանակին
մէջ դնելու համար շինուած է ո: Ա աս ա-
զի՞ ըստաւ դատաւորը, բեր ուրեմն որ տես-
նամի: Գնաց նկարից, և նոյն ժամանեն նկարը
բերաւ: Այս նկարին վայ սպանչելի վարպե-
տութեամբ նկարուած էր ամենասուրբ տօնմի,
այսինքն՝ սուրբ Յովակիմ, Աննա, սուրբ Յովէ
սէփը, Վարիամ սուրբ կյար, նաեւ Քրիստոս
մանկութեան հասակին մէջ: Եւ որովհետեւ
նորա վայի փոշիները մազքուած էին, ներ-
կերուն գոյները պացծառ կը փայտին: Հան կը
նշամարուէր արհեստին ճարտարութիւնը, մար-
մոց փափկութիւնը, զգեստուց իրարու հետ,

ունեցած գեղեցիկ կապակցութեան և ծովա-
քերու վայելու յարմագութիւնը, դիմաց աղ-
նուութիւնը, նկարագրին բուն նշանակու-
թիւնը, ահա այս ամենը կը յայտնէին Ուա-
փայելնկարչին ճարտարութիւնը Դատաւորը
նոյն պատկերը շրջանակին մէջ դնելով, տե-
սաւ որ ձիգ առաջուան պատկերին մեծու-
թեան չափ էր, և զայն բաւական ժամանակ
նկատելն զինի, հարցուց անոր գինը: Պատ-
կերահանը պատասխանեց: Այսէն երկու հա-
րիւր ոսկի պատրաստի ունիմ, երէկ բարե-
կամմը Անգլիացիի մը կազմանէ այսպիս սոսոկ
տուաւ նիս այս պատկերին համար ողուն սաս-
տիկ կը բաղձաց: բաց ես չուզեցի զայն նոյն
չափ ստակի վաճառել, այլ դիմացայ և երկու
հարիւր յիսուն ոսկի պահանջնորդի, որովհետեւ
արգեն գործը գիւրաւ այնպի դրամ կ'արժէ:
Տաց քանի որ Ձեր մեծապատուաթիւնը
կուզէ զայն գնել, երկու հարիւր ոսկին նիս
որ աւելի կուտաք, տուէք, և ես անոլ կը բա-
ւականամ: ո:

Սարսափեցաւ դատաւորը խարեւային ա-
նիրաւութեան վկայ, և սասապէկ զարդացաւ.
բաց զափելով իւր բարկութիւնը հանդար
տօրէն ըստաւ անոր, աԲեղդետ Ժմիլիձեր պատ-
կերին գեղեցիկութեան և աղժանաւուրութեան
մասին, այլ միայն այսպափ կուզեմ իմանալ,
թէ ինչու համար երկու հարիւր ոսկիի զ

բայն ձեռքէն յափշտակած հացդ արդեօք ըսկարզացան ղարթուցանելքո մնացդ խիղճը Վայ թու ատելի անձիգ, ահա հիմա հասկըցար թէ քո յանցանկդդ որբան մեծ պատիժներու և չարչարանաց արժանի է: Վհա դուքու ձեռօքդ զքեղի կատապարտեա, և քեղմեծութիւն կըսպար եթէ նցն դատաստանաւ դատուելի՝ որով զամար դուք անձդ դատապարտեցիր: Վայց այժմնորդն այս տեսակ անդրաւութիւն գործէլէ զգոյն եղիք, որ ջըսա թէ երկու ալեկէն կրտսէ, բաւ դատաւորը, և հրամացեց ըսպասաւորներուն որ դուռը բանան, ուր ծերը պահուած էր. և դուռը բացուելով ծերունին տեսնուեցաւ: Վայ աեղդիւրին է մակաբերել, թէ Բնագիտ ահ ու սարսափ պատեց նկարից, երբ յանկարծ ծերը տեսաւ. երեսին դոյնը նետեց, տարակուասնաց մէջ նմկաւ և ամբողջ մարմնը միսաւ դողալ: Դատաւորը թող տուաւ որ քիչ մը ժամանակ նոյն սարսափիկ երկիւղին ու տագնապներուն մէջ ալէկոծի: և յետոյ ահաւոր ու սոսկալի կերպարանօք և իշխանական ձայնով մը դոչեց և բաւ: Վիզ անդութ, այդպէս ուրիշն նենդութեամբ և անիրաւութեամբ վարուեցար այս նեղջ պարզամիտ և տնանի մոսրդուն հետո ովլթուտաւին, այս տառապեալանձը անիրաւութեամբ խաբած ատենդ արդեօք բնութեան սարսափը չզգացիր: Վայ անզօր և դողդովուն ծե-

Որչափ սոսկալի է խարէութիւնը, որ աստիճան զզուելի և անսպատիւ բան է խարդա-

ծախեցիր:: Պատկերահանը երբ այս խօսքը լսեց սկսաւ ծանր ծանր երդմամբ հաստատելթէ լսածը սոււտ չէ. և յաւելլուց ըսելլին շմէկ կըկամի Ձերմէնապատութիւննը խօսքերոււս հաստատութեանը համար նոյն բարեկամը հոս կը բերեմո: Դատաւուորը դարձեալպատամաննեց ըսելլով՝ Շմարիտ կըսես ուրիշն որ նորա համար երկու հարիւր ոսկի մատուցինուն ։ Վայ, ու աէք, պատրաստ ունիս; բայց կ'ուղեմաւելի ստակով վաճառելու: Վայ կը բաւէ, բաւ դատաւորը, և հրամացեց ըսպասաւորներուն որ դուռը բանան, ուր ծերը պահուած էր. և դուռը բացուելով ծերունին տեսնուեցաւ: Վայ աեղդիւրին է մակաբերել, թէ Բնագիտ ահ ու սարսափ պատեց նկարից, երբ յանկարծ ծերը տեսաւ. երեսին դոյնը նետեց, տարակուասնաց մէջ նմկաւ և ամբողջ մարմնը միսաւ դողալ: Դատաւորը թող տուաւ որ քիչ մը ժամանակ նոյն սարսափիկ երկիւղին ու տագնապներուն մէջ ալէկոծի: և յետոյ ահաւոր ու սոսկալի կերպարանօք և իշխանական ձայնով մը դոչեց և բաւ: Վիզ անդութ, այդպէս ուրիշն նենդութեամբ և անիրաւութեամբ վարուեցար այս նեղջ պարզամիտ և տնանի մոսրդուն հետո ովլթուտաւին, այս տառապեալանձը անիրաւութեամբ խաբած ատենդ արդեօք բնութեան սարսափը չզգացիր: Վայ անզօր և դողդովուն ծե-

լառութիւնն ու նենգութիւնը, մարդկային ընկերութեան մէջ ապրելու անարժան է սուախօսը, վասն զի այնպիսին ամեն չարիք գործելու չ'ամաչքը . թէպէտ միշա այնպիսեաց վախճանը թշուառութիւն է, միշտ կը խցառառաւակութիւն, կ'անարգութիւն և անպատճիւ կ'ըշլան, բայց գարձեալ չեն զգուշանար մարդիկ: Հյաւալի ճշմարտութիւն մի կ'ստիպուինք լուսասվանիլ, որ այս գարուս մէջ ամեն առախճանի մարդիկ այս մզութիւնը մասնաւոր արհեստ ըրած են, և կեղծ քաղաքականութիւնըն է՝ որ զայն կը քաջալերէ: Երանի՛ այն ժողովուրդին, որ արդարասակը և գթոս գատաւորներու և իշխաններու հայրական խնամքը կը կառավարուի, որով չարեն իրենց պատիճը և բարիններն իրենց վարչքը կ'ընդունին:

Պ.

Տամա և. Պիլթիս

Արակոսաւ կ'ողար ու կը հեծէր Դիոնէսիսի բռնաւորութեան տակ: Այս վայրենի մարդը խարդախութեամբ և բռնագուստութեամբ այլոց աթոռը և իշխանութիւնը յափշտակելք զինի՛ կը ջանար ժողովուրդը սարսափեցներով և անդժութեամբ հաստատել իւր իշխանութիւնը: Տարաբաղդ ժողովուրդ:

դը, որոնք թշուառ դերիներու պէս նորահարասահարութեանց անտանելի ծանրութիւնը կը կրէն, պարսպագորուած էին ձայն չի հանել, միմնէւ անգամ արդար իրաւունքը ակտամայիրենց սրբին մէջ ծածկեալ կը լսէն, որովհետեւ եթէ անձ մը տժգուհութիւն մը ցուցնել համարձակէր՝ մահուան արժանի յանցանիք կը սեպուեր: Այս ընդհանուր սարապիկը ահ ու դողին ժամանակ՝ Պիլթիսս անունով վառվիւռն և աշխարհ երիտասարդ մը, երբ օր մը բանաւորին բարբարոսութեամ մէկ օրինակը կը տեսնէ, զը կրնալավ իւր արդար ցոսման կիրքը զայել, յանդգնեցաւ բարձրածոյն իւր հայրենեաց վատէրը ողքալ, սակայն իւր այս յանդգնեցաւթիւնն և անխոհեմութիւնը շատ սուզի նատառ: իւր վայ: Արակոսաւ կիրակի սիստի վարչքալ բռնած լըրտերները՝ կիրակի սիստի այս գործը ամենայն ճըշդութեամբ լուր սուբէն իրեն: Բռնաւորդ կատաղը գտաղմանի մը պէս սասամիկ բարկանալով երդում ըրաւ վիշտ առնուլ, և նայն ժամանեւ բռնաւորի արքանեալիները խեղճ երիտասարդ գր պաշարերով կապեցին և ըստան կը տանէն: Բանտ երթաւուն ճանշուն վայ: Տաման անունով գերազանց առաքինութեամբ զարդարեալ երիտասարդը ահա անոր կը պատահէ, որ Պիլթիսս իւր անձին պէս կը սիրէր: Տաման իւր բարեկամին այսպիսի անարդ և ա-

զէտափի վլճակը տեսնելով սաստիկ ցաւած, մեծ տաղնապով մը և վլոտակրութեամբ շուտով անոր մօտենալով հարցուց. «Այլքելիդ իմ Պիւթիաս, ի՞նչ է այս, ի՞նչ ըրած ես արգեօք, գուցե՞ քու անդուշութիւնդ և չափազանց եռանդդդ...» և այլուր սիրելիդ իմ Տամնն, ինչ որ շատ անգամ կը գուշակէիր ահա կատարեցաւ. Ե՛ս չգիտցայ ձեզ նման խոհեմու ծանր ըլլու. ըստ գիտացայ քու բարի խորհուրդներուդ. հետեւիլ. քեզ հնազանդիլ ու զելով երկար ժամանակ ես զիս զափեցի, և բռնաւորին վայրագ բնութմիւնդ գալունի կերպով ատեցի, բաց վերջապէս իմ բարիկութիւնը սրտիս այս գալունիքը երեւան հանեց. այն, աղնիւ բարեկամ, բռնաւորին այնքան անգեթութեանց գեմունեցած ատելութիւնս ալ ըստ կարողացայ պահել. Կը տեսնեմոր պիտի մեռնիմ, սակայն այսպիսի անսարդ գերութեանէ. մը աւելի լու է ինձ համար մեռնիք. միմայն կը ցաւիիմ ծերունի հօր, սիրելի ամուսնոյս և զաւակներուս վկայ. «Վկալիդ իմ Տամնն, քեզ կը յանձնեմ զանոնք. իմ աեզս գու միսիմ մը մասական է աղնէ անոնց. ես ալ իմ բազդիս վկայ ալ չի պիտի տրամն ջամն.» Վկորէն գահճճները ալ չուզեցին, որ այս երկու ցաւագին սիրելիները այսպէս երկար մէկ մէկու հետ խօսալիքն. ուստի սաստիկ քաշելով մէկ մէկէ զատեցին, զՊիւթիսո

քաշիոտելով կապելու տարին, և զՏամնն արգիւեցին անոր ետեւէէն երթալու. Տամնն իւր սրախն սաստիկ ցաւէն նեղուած՝ սկսաւ իւր մոտաց մէջ շատ տեսակ խորհուրդները յլրդանալ, զայն ապասելու միջց մը գտնալու համար, բայց ՚ի զուրք ։ Երբեմն այս ինչ հընաբըը և երբեմն այս ինչ բանը ընտրելով՝ շատ մը խորհրդանելէ ետեւ, անոնց ամէնն ալ անօդուտ և անապատշաճ համարելով մէկդի ձըգեց, և վերջապէս միաբը գրաւ Դիմոնէսիոս բռնաւորին առնելու ներկայանալ։

Ի՞նաւորը իւր կասկածոս բնութեան համար վայրիկան մը անգամ զօրաց բազմութիւններուն չէր հեռացնէր, և Տամնն այս զօրաց բազմութեան մէջն անցնելով բռնաւորին ներկայացաւ. Նորա ոսից առնել գետնաման տարածուելով ըստ անոր. «Վ Տէր, հիմն Ձեր հրամանաւ երիտասարդ մը չըկթայի մասնեցաւ. Ես զայն պաշոսպաննելու կամ մենք համար թողութիւն խնդրելու եկած չէմ, թէպէտե նորս յանցանքը իւր երիտասարդական մէկ անապատէհ եռանգը միայն եղած է, սակայն բաւական է որ նա քու աշքիդ յանցաւոր երեւցած է. Իմ Ձեզմէ խնդրելու շնորհքս այս է, որ այն երիտասարդ գին համար վճռելիք գտատասաննդ թող մնայք քանի մը օր, որովհետեւ նա այս բարագէն քիւ հեռու ծեր հայր մը, իին մը և երկու զա-

Հակներ ունի , որոնք խիստ պէտք ունին նուրա ներկայաւթեանը Տէր իմ , փախանակ անոր՝ ես զիս ՚ի բանս կը մասնեմ , և այս թէլ օրեւա պատիմը ես կը քաշէմ , որպէս զի նա կարող քայլ մերջն անգամմ՝ ալ իւր ընտանիքը տեսնել . Թող երթայ զանոնք միմիթարէ՝ ու իւր պատուէրները տայր ընտանեկան կարգադրութիւններ ընէ , և անոնց իւր վերջն ե . հրաժարական ողջանը տայր ։ Նասարակցու նա որոշեալ զրդ պիտի վերագառնայ , և թէ որ ուշանայ , Թող մեռնիմ ես նորու ուշանալըն համարու

Օ քրիստու . Դիմէսիտու այս նախագամնչառաջինութեան վրայ , և այսպիսի ըլ տեսնուած բանի մը վերջը տեսնելու հետաքրքիր ըլլարով՝ հրաման տուաւ ըսելով . ԱՇաքեղ կը չնորհեմ երիտու օր , սակայն պէտք է որ հիմ գու կապուիս նորա տեղ՝ Ի՞այց գիտոցից որ եթէ նա երրորդ օրը առաւօտուն հոս Այս բակուսայի մէջ ըլ գտնուի , դու պիտի ինիս առաջին գատապարտեալ :

Տամնը այս պատասխանին վրայ ուրախաւ նալով , վազեց և շւտով գնայ իւր բարեկամն բանալը . այն տեղ իւր ձեռքովք բակեց նորա կապանքը , և ծերմագրալ նարդիքը նորա տեղը կապելով կըսէ անոր . ԱՌ ուտ րոէ , գնա , և անձամբ միմիթարէ քու գիրազդ ընտանիքը : Երկու ամբողջ օր կը չնորհէ քեղ Դիր նէսիս , զոր կարաղ ես դու անկասկած ՚ի գործ

գնել նաւ մի գտնալ և փախչեալ դքեզակը ըւցնել , ու այս բանիս համար այս երիտու օրն ալ հերիք է . բայց ամէն բանէ աւելի պէտք է որ շւտով գործդ յառաջ տանիս , գնա , և ՚ի զուր ժամանակ մի վատներ ։ Պի-թիւաս այս խոպերէն ապշած զարմանալով մը կըսէ Տամնինքն . այս փախչեմ , փախանակ ինձի ես զբերգ անողորմ բռնաւորին մովեգնութեանը մատնեմ , ուրեմն այսպէս կը ճանաւ չըր զիս , Տամնն՝ Դարձուր կ'ըսեմ , շւտով իմ կապանքս ինձ դարձուր . Բ'նչպէս կարելի է , որ ես իմ անձիս վրայ կրեմ այնպիսի մէկ գործ , որնոր անօրէնութիւն է և թուլամըր թութեան արգիւնը ու արաւ լիցի , կ'ըսէ Տամնն , քու վէհանձն ու ազիս հոգիու երբէք վատարտութիւն կոմ խարդախութիւն չկընար ընդունիլ . և ես Բ'նչպէս կընամ ատանի բանն մը կարծէլ քու վրայ , մանուանու եթէ ձեր վրայ այցպիսի կասկած մը ունենայի , գուք իմ բարեկամն չէիք կընար ըլլալ : Ի՞այց ինչ որ ես ձեզ կը պատութիւնմ , վատութիւնն եւ խարդախութիւնն չչ երբէք : Դու հայր ունիս , կին ունիս , և երիտու հաստ ալ զաւակի , որոց պէտք է նուիրսա քու կեանքդ և զքեղ , վասն զի անոնք առանց ձեղի չեն կարող ապրիլ : Ես ինձ սարսող կամինձ կարօս երբէք մարդ չ'ունիմ , վասն որոյ սարսորս է իմ անձս քեզի պէտք բարեկամի մը վրայ դնել ինձ համար այս բա-

նը ամեն բանէ աւելի քաղցր է ու կրկնեց ան-
դէն Պիւթիսա . ավան լցի , արդարեւ գու-
շախտի կարողանաս վայելվէլ այդ քաղցրութիւ-
նը . գուն կը փափագիս , որ ես երթամ , այն ,
պէտք է որ ես երթամ , և բնութեան վլրջն
օրէնքը կատարեմ . պիսի երթամին վլրջն
հրամեշաս տալու հօրս , ամուսնոյս և երկու
որդւոյս . սակայն անշաւշա երրարդ օրը առա-
ւոտուն դարձեալ հոս պիսի տեսնես զիս , և
գուն պիսի ըլլաս իմ տեշզա անոնց միխթարիչն ու
օգնականը Փօնանասի ինձ զընէզ անոնց տալով
իրենց մէծագոյն պարգեւ մըլլան պիսի ըլլամ
և անսարակցա եմ որ այս կերպով կարող եմ
զանոնք միխթարելու . Այս ըսելով գրիեց իւր
սիրելի բարեկամն , և երկար գրիսասանութեա-
նէ և արտասուբների վերջը ձանասարհ ին-
կաւ Պիւթիսա դէսկի իւր երկիրը . Տուն հաս-
նելով և այս գումքը տալով այնաել երած սրբ-
տաճմիկ աղեկիուր տեսարանը նկարագրել
հարի չէ . ամեն մարդ կընայ մակարերել այս
պիսի վայրինի մը քատմնելի հետեւանինները .

Երկրորդ օրը անցաւ , և երրորդն ալ լու-
սացաւ , իսկ Պիւթիսա չերեւեցաւ . Տամնը
յատուկ միտքը գրած էր , որ նա իւր ամենա-
թշտառ ընտանեաց արցունիններէ և կակա-
նալիր ողբերէն արգիլուելով իրեն համար փրո-
կութեան ձանասարհ գտած էր , և այս բա-
նիս վրայ խիստ կ'ուրսիսանար . Դիմնէսիոս

բռնաւորն ալ լնիր հակառակը բնագինք խա-
բուած կարծելով խիստ բարկացած էր , այս մի-
ջոցն հրամայեց որ Պիւթիսասի համար որո-
շուած տանջանկներով Տամնը անմիջապէս
տանչեն :

Այս սոսկալ աղետին գայգը բոլոր քա-
ղաքին մէջ կը տարածի . և այս սարսափելի
տեսարանն ներկայանալու և անսնելու . հա-
մար քաղաքին բաղմութիւնը այն հրամարա-
կին մէջ կը ժաղալուէն : Ոմանք կ'աղեային այն
խեղճ նենգեալ բարեկամնը՝ որ զուր տեղը պի-
տի մեռնէր . ոմանք կ'անիճանէն դաւաճաւ
նին անօրէն խարդախութիւնը , կարծելով թէ
փախած է . և բոլոր մարդիկ ալ իրենց սրտե-
րուն մէջ բռնաւոր Դիմնէսիոսին անգիտու-
թիւնը կը դատապարտէն , որ բիւրաւոր զօր-
քերով շղապատուած և բարձրակառաց գա-
հաւորակի վրայ բազմած , երբեմն իւր զար-
հուրեկ և բարիութեամբ կրակ կարած աչ-
քերը ասդին անգիտի կը պոտցնէր , և միշտ ան-
հանդիսա էր իւր վլէմինդրութեան համար
Յետայ Տամնն շղթայ ներով բեռնաւորեալ
իւր գահճին հետ հրապարակ կը մօնայ . իւ-
րաքանչիւր որ այս ցաւադին տեսիլով տես-
նելով կը կծիսի . ամեն մարդու գութը կը
շարժի . կական կարեկցութիւնն մը , և միան-
գամայն սարսափն ու սոսկումը կը յուղէ ա-
մենուն սիրտը . առ հասարակ ամենուն աչ-

Քէն ՚ի վար արտասուաց կայլակներու թա
փութիլը կը տեսնուէր, որ սրտի անդուագ յուղ
մոնկրէն այլ եւս չէին կրնար ծածկուիլ. Այս
ընդհանուր և ապէտալի ցաւերուն մէջ Տաւ
մներ միայն պարզ եւ ուրսիսադէմ կը ներկայա
նոյ. Նա իւր սրտին մէջէն կ'օրհնէ զի ստուած՝
որ ՚ի բարին կատարեց իւր փափաքը, վասն
զի իւր անշապի բարեկամը փրկուած էր:

Վնդորք և խաղաղ մաքով հրապարակը
համենելով, գլխաստման աեւպին կեցած սոսկալի
հարուածնին կը սրտակէր, և գահման նորա աչ
քերը կապելով և նորա պարանցը մերկացր
նելով, իւր դաշցնը նորա վիճոց շողացուցած
ատենը՝ յանձնարծակի հեռուէն պատարտ ձայն
մը կը լուսւի. Ալեցիր, կեցիր անոգործ, և
շուտ մը երիստասարդ մը կը տեսնուի, որ մեծ
ուագնապալ մը կամապարէր, շոնը կարած
հեւարլը քրոնահոն և փոշոտեալ կը փակէր:
Այս ազագալի վրայ իւրաքանչիւր որ շուա
քելով յետ կը դառնան և ձանապարհ կը բա
նան: Յետայ այն տեղ համենելով շնչառապա
՛՛ Դահութիւն գոհութիւն Աստուծոյ կրկան
չէր. և միանդամյն ուժ կառնէր ինքպէնքը
ընկերին տեղմահուան պարապատելու համար,
վասն զի որդիական պարտաւորութիւնը չի
կրցաւ արդիւլ զինքը բարեկամական պարտը
ու խոսառումը կատարելէ. յետոյ վազելով կը
փութայ Տամնին քով, և նորա պարանցը

կ'յնայր Հիմա ժողովդոց մէջ կը ծագի քըրթէ
մնջիւն մը, հանգերձ կարելցութեամբ, զար
մացմանիք և ուրախութեամբ. և այն սատի
ձան զարմանդը կը շատնայ, որ մինչեւ անդամ
չէին հաւատար թէ անկիա Պիւթիասն է,
ուստի և կ'ըսէին. « Ապաքէն ովկ կը յուսար՝
որ Պիւթար պիտի վերադառնայ, և կամ
ովկ կը հաւատար նորա գալատեանկը ո: »

Իսկ Պիւթիաս իւր բարեկամէն զատուե
լով, համորձակ Դիմնէսիսի առջեւը կ'ելլաց.
բռնաւորը զարմանարով ապշած նորա երեսը
կը նայէր, և հազիւ թէ կը հաւատար որ նա
իսկ Պիւթիասն է: Յետոյ Պիւթիաս կրուէ
Պիմնէսիսին. Ալը տեսնեն քու զոհու, հիմա
կատարեցէք Ձեր իմ վրայ վժիուը, և թողէք որ
անմենդու ազատի: Ո՞եծ և ծանր դէպէ մը ստի
պեց զիս որ ես սպարան ուշանամ Դմ հայրս՝
ո՛հ, իմ խեղճ ամենաթշուառ և ողորմէլի
հայրս՝ երբ իմ մահուան անակնիկալ գոյմը
լուց, յանձնարձ կայծակէ զարնուածի մը պէս
գետինը ընկաւ. և զայն սմէսափեցնելու հա
մար ամէն հնարք ՚ի գործ դրի, բայց ՚ի զնւր,
վասն զի իմ այսչափ հնաբըներուն՝ ջանից և
աշխատանաս հակառակ այն գիշերը իմ աչ
քերուս առջեւը սաստիկ խոճութեամբ նորա
մեռնիլը տեսայ ո: Այս ըսած ատեն՝ խեղճ
Պիւթիասի արցունքները փոքր ննչ իւր խօս
քերը ընդ միջեցին. յետոյ նորէն խօսքը շարոււ
3

նամից ըսելով . Այսամիկ դժուարութեամբ
և բանութեամբ զիս իմ ապէրջանիկ ամուս-
նոյս գրիէն և իմ զաւակներէս զատեցի, և ա-
ճապարհցի գառնալ և այսեղ հասնիլ : Այ-
սայն կարձ ճանապարհէ մը գալ ուղերջի գի-
շերուան այն մութին մէջ ճանապարհս կո-
րուսի, և մզգրելով անսառի մը մէջ ինքոյ,
ուր մինչեւ առաւօս մացաւախիս փշառ ու-
խարսութուրդ տեղերն պատերջի խաս հե-
ռացայ ճանապարհէն : Վերջապէս շխակ
ճանապարհը գտներջ՝ աճապարհոք վաղե-
ցի, և ուրսին եմ հիմա, յարմար միջոցներ հաս
գտնուելուս համար : Դարձուր ուրեմն, ինձ
դարձուր իմ շղթայներս, որպէս զի ազատուի
իմբարեկամն . ասիէց զատ ուրիշ բանի մը չեմ
ցանկար : Պիւթիսա այս բաներս պատմելու
ատեն՝ ամենքն ալ չը կարողացան զագել իրենց
արցունքները . նյն խիւ բռնաւոր իւր սրտին
մէջ կոկիծ մը զգաց՝ զօր պարագ անցը պահէն
կ'աշխատէր, բայց այնու ամենայնիւ խայն
հրամայեց որ Տամնն արձատին : Վայ միջցիս
ահա ուրիշնոր և սրանցելի բան մը եւս տես
նուեցաւ, որն որ աւելի կրինապատից ներկայ
գտնուալներուն լայն ու զարմացումը, վասն
զի Տամնն իւր կապերը Պիւթիսան դար-
ձրնել չը ուղեր . Վարդէն որոշեալ ժամը ան-
ցած է, կրտէր, և հիմայ ննձ կ'իյնոյ որ ես մեռ-
նիմ դու քու խեղճ և թշուառ որդւոսդ քովա

գնա ու Արտասուելով կը պատասխանէ Պիւ-
թիսա . այսանի որ կենդանի ես, զու անձգ
ասպիցնելու ժամանակդ երբէք չը կրնար ան-
ցեալ լինել, և ամեն օրէնք և ամեն իրա-
ւունք այս ազատութիւնը կը չնորհեն քեզի :
Տամն կ'ստիպէր զիւթիսա, որպէս զի ու-
րանայ իւր յանցանքը : Վայ ապնիւ կոփուը
երթարով աւելի կը բարեպէր, երկուքն ալ
Դիմնէսիսէն կը խնդրէն իրարու ազատու-
թիւնը մէկը իւր մանը երարեկամին ազատու-
թիւնը կը խնդրէր, խիւ միւլ բարեկամին ա-
զատութիւնը և իւր մանը : Իսկաւորը թէ-
պէս երկամիէ սիրա մ'ունէր, այնու ամենայ-
նիւ այսպիսի բաջապահու մաքառաման մը գէմ
երկար ժամանակ չի կցաւ գիմնալու այլ յաղ-
թելով իւր վայրենի կրից, և իւր սիրու ձըմ-
լած գոչեց . Վայրիւ պին ալ ազատութիւնն և
կեանք արժանի է, և ես երկուքն ալ զայն կը
չնորհեմ : Վայ որովհետեւ այսպիսի անհա-
մենատ բարեկամութիւն մը աւելի մեծամեծ
պարգեններու արժանի է, թագաւորութիք
միայն կարող եմ վարձատիւ զձեզ, և ես ձեր
երրորդը պէտք է ըլլամ : Վայ բաերավ գա-
հէն իջաւ, և աճապարեց զաննիք կաթոգին
սկրով գրկելու :

Նամիւ որ երբեմն թատրոնական խաղե-
րու մէջ երեւցած անբնական սեպացեալ քա-
րաժայուր՝ մէկ ակնիթարթի մէջ վայելլագեղ

ըի երիտասարդ անձ մը , որ այն առաջն բոր-
քով ման մէջ ուրիշ բանի մամկէ չընէր , բայց մի-
այն իւր կրից բռնութեանը :

Ապարտիղ մը կը փոխուի , այսպէս ալ մէկ վայր-
կենի մէջ բայրը ժողովրդոց գէմիքերը փոխուե-
ցան : Ձևախճութեան և ողբոց տեղ՝ ցնծու-
թեան և ուրախութեան հանգէսներն յաջոր-
դեցին : Եմեն մարդ կը փափագէր այն չնաշ-
խարհի բարեկամները մօտէն տեսնել . ամէն
կոզմէն բերկրալիր փառաւորութեան արձա-
գանգներ կը լսուէին՝ որ օդը կը հնացնէլն .
բոլոր ժողովուրդը այն երկու բարեկամները
թագաւորին հետ ջղասպատելով , հրանուելով
և ցնծարվ մեծ յաղթութիւն մը լրածի պէս՝
աննոց ետեւէն գնացին մինչեւ թագաւորա-
կան պալատ :

Այս գէպը բնենին այնքան սրտաշարժ է ,
որ բառ մի անգամ աւելցնելը աւելըրդ կը հա-
մարիմք . միոյն կը փափագէնքը ՚ի բոլոր սրտէ՝
որ ամեն մարդ իրարու հետ Տամանի և Պի-
թիասայ անսախա՝ ճշմարիտ ու անիեղծ սիրո-
վը կապուած ըլլային , այն ատեն միայն կա-
րող էր ամեն մարդ երջանիկ ըլլալ :

Ե.

Եռելքեդս

ԱՅՍ անձը երիտասարդական հասակին
մէջ լորիտանից տէրութեան ինքնակալ թա-
գաւոր ըլլալով , իւր անձը գէղմութեանց և
մօլութեանց տուաւ , ուր փութով կը գլու

Այս երիտասարդ թագաւորը օր մը որսի
երթարով , հմտ գիւղացի Ետելլիքեա անուն
օրիորդ մը տեսաւ , որ զուարժ դիմօք երգե-
լով իւր փոքրիկ հօտը կը պահպանէր . և որով
հետեւ այն գիւղական աղջիկը իրեն աշաց
գէղեցիկ և համեստ երեւեցաւ , նոյն ժաման
զայն սիրեց : Եւ իւր մոտաց մէջ գիտնալով՝ որ
մէկը չէ կարող թագաւորին ընդդիմանաւ այն
պէս կարծէյ՝ որ մէկ անգամ միայն հրապու-
րելով պիտի կիրայց յաղթել այն աղջիկան : Բայց
Ետելլիքեայ օրիորդին վես այնպիտի կարծու-
թիւն մը և հաստատուն արթութիւն մը գը-
տաւ , որ ընաւ մոքէն անգամ չէր անցներ .
վասն զի տեսաւ՝ որ աղջիկը ամեն կերպով ընդի-
մացաւ իւր մոտաց խորդորքեան , օրիորդին հաս-
տատամութիւնը խախտելու և խարելու
համար ամեն գորովածիր հնագրներ , ամեն տե-
սակ յցսէր , մեծամեծ պարզեւներ և առատ
խաստմունքներ ՚ի գործ գրաւու , բայց բնաւ մէկ
հնագրով ու խաստմունքով ըստ կարողացաւ
նորա սիրաը գրաւել . և համեստ ու առարի-
նի աղջիկն ընդդիմութեան համար փոխանակ
ամաշելու՝ և իւր ըրբութիւնը ձանշալով ետ
կինարու , և փոխանակ իւր սրտին մէջ բոր-
քոբած ըստ ցանկութեան հուրը մարելու՝ ալ

աւելի բորբոքեցաւ։ Ետելվիգեսի պատկերան
կերպութիւնը միշտ իւր մոտաց մէջ ըլլարվ,
կարծես շարունակ իւր աշաց առջև կը տես-
նէր զայն, թէ ցորեկուտան և թէ գիշերուտան
ժամանակ ուրիշ բան չէր տեսնաք՝ բայց միշ-
տին իւր սիրելին։ և ցանկութեան փափաքը
այն աստիճան զօրացաւ իւր սրբին մէջ, որ
այնպէս կը կարծէր՝ թէ ալ չէ կարող առանց
անոր ըլլալ, և իւր սրբին այս բարձանքը ու-
րիշ կերպով կարելի չէր ՚ի գլուխ հանել, վա-
սրն զի չէր կարող այն ազնուամիս օրիորդին
անցալմէլ մաքին հաստատութիւնը ուրիշ
բանով յաջմէկ, բայց եթէ զայն իրեն կին
առնելըվ։ Այսից նիդն այնպիսի վիճակի մը
մէջ կը գտնուէր, որ այդ օրինաւոր ամուս-
նութեան յօսն ալ չէր կննար ունենալ. քան-
զի ննչպէս կարելի է այն աստիճան ցածանալ,
և բնչպէս կարելի է գիւղական աղջիկ մը թա-
գաւորական թագով պասիկը։ Այս պատճա-
ռաւ նս մեծ մոտածութեանց մէջ ընկլմեցաւ։
Ա երջ ամենայնի իւր յնորական կիրքէն յար-
թուած՝ առաջարկեց ։ Ետելվիգեսին որ իրեն
հետ ամուսնանայ. և նա՝ որ ուրիշ ամեն քա-
ջալերութիւնը և խոստմունքնը առ ոչինչ
համարած էր, այժմեան իրեն մատուցուած
յանկարծական մէծութեանց փայլէն շանա-
բով, այն մնասի փառքին դէմք կը կրցաւ դնել։
Բայց շատ դժուար է, որ ասանկ արտաք

կարդի և յանկարծական բարձրանալը իւր մէջ
ձշմարիտ երջանկութիւն ունենայ։ Ետելվի-
գէ պիտի զդար իւր վիճակին ուրիշ վիճակի
փոխություն համար, և վերատին սիրտի փնտ-
տուէր զուարձալի թաշտերը, և գեղվական
զուարձութիւնը պրուն մէջ ինքը ծնած էր։
Ետելվէ դասի հարանիքը շատ անհաջո եղաւ
իւր ամենով աւելութեան, վասն որոյ խիստ
ամեն կողմէն շուշնեկ՝ արտունջներ և անար-
դութիւններ երեւցան. խեղճ թագուհին ա-
մեն մորգիկներէն անարգուելով և արհամար-
հուելով՝ սափուեցաւ արքունեաց մէջ ա-
ւելի անարգ ու անպատճի օրեր անցնելը ։ Կայց
սակայն սակաւ ժամանակէն զինի՝ իւր խել-
քովը երացըրութեամիբը նախարարներուն հը-
պարտացեալ և գառնացեալ սրուերը քայլուա-
ցուց, և նորս սիրելի ըլլարվ թագուհի հըր-
շակեցաւ, և իրիւն թագուհի պատուեցաւ։
Եաց այս յաջողութիւնը նորոգեց այն շարիք-
ները որոնք պատրաստուած էին առաջուանէ-
լամիլագոս իւր չար կամաց և սրտի անպի-
տանութեան հետեւելով, սակաւ ժամանա-
կի մէջ մոռացաւ իւր ինոց վրայ ունեցած
սէրը որոյն նորս հետ կարուած էր, և զայն
արհամարհէ լուրիշներուն հետ սկսաւ սի-
րահարիլ։ Ա տելվիգէ իւր նախատանաց ցա-
ւը բաւական ժամանակ լուսութեամբ ան-
ցուց. բայց երբ տեսաւ՝ որ թագաւորին

սրտին գաղանութիւնը օր ըստ օրէ կ'առաւ ւերը, զանազան մարդկանց միջնորդութեամբ զայն քաղցրացնելու աշխատեցաւ . և երբ ք յանոցեցաւ՝ ուղղեց անձամբ եւս փորձելու յու սարսկ՝ որ գուցի իւր աղաւակները և արտասուլքները կարող են նորս սիրար քաղցրացը նել: Ուշուան թագուհի, երանի՛ թէ այդ պէս քննէիր: Խեղճ թագուհւոյն արտասուր ները և թախանձակները կամելէց դասին սկրտն ի գումաթ շարժելու տեղ՝ աւելի խատացուցին: Վնողը թագաւորը իւր գաղանցին կրկից սասակութեան ատեն՝ հրամացեց զայն տունեն հանել, և բերդի մը մէջ մինչեւ ՚ի մահ բանտարիէլ: Այն տեղ, այն ամսի բերդին մէջ խեղճ թագուհւոյն հառաջակները և արտասուլքները միայն իրեն ընկերակից և միսիթարիէլ զան, մինչեւ այն աստիճան եզաւ՝ որ օրէ օր հարսւմաշը ըլլարսկ՝ ալ դիմուգացաւ իւր սրուիցաւերուն այս անտանելի աղետից դիմանալ, այսու ամենայնիւ բդդ գումացաւ, և չի համարձակեցաւ թագաւորը յանդիմանելու՝ կամանոր վասայօք արանջարու. և երբ հասկցաւ, որ իւր ցաւուլ մցուած կենաց վերջն ժամը հասած է, անուշ և սիրամբ խօսերով թուղթ մը գրեց, և որով յայտնելով իւր հրաժարման վերջն ողջյուր՝ քառասուն տարեկան հասակին մէջ կիրեց իւր կենաց օրերը:

